ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

ИНСПЕКЦИОННЫЙ ОРГАН ПО
БЕЗОПАСНОСТИ ПИЩЕВЫХ
ПРОДУКТОВ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Р У К О В О Д И Т Е Л Ь

Հ Ր Ա Մ Ա Ն

18 օգոստոսի 2022 թվականի N 2561-Լ

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՉՎԵՐԱՄՇԱԿՎԱԾ ՊԱՐԵՆԱՅԻՆ (ՍՆՆԴԱՅԻՆ) ՀՈՒՄՔԻ ՍՏԱՑՄԱՆ, ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ (ՄՇԱԿՄԱՆ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի դեկտեմբերի 19-ի N 1940-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 7-րդ ենթակետով, ինչպես նաև Մաքսային Միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգն ընդունելու մասին» N 880 որոշման պահանջների կատարումն ապահովելու նպատակով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ռ Ի Մ Ե Մ՝

1. Հաստատել՝

1) կենդանական ծագման չվերամշակված պարենային (սննդային) հումքի ստացման, վերամշակման (մշակման) գործունեություն իրականացնող արտադրական օբյեկտների պետական գրանցման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) կենդանական ծագման չվերամշակված պարենային (սննդային) հումքի ստացման, վերամշակման (մշակման) գործունեություն իրականացնող արտադրական օբյեկտների պետական գրանցման համար ներկայացվող դիմումի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի։

X

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆ

2022թ. օգոստոսի 18

Երևան

Հավելված 1
ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի

ղեկավարի 2022 թվականի օգոստոսի
18-ի թիվ 2561-Լհրամանի

ԿԱՐԳ

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՉՎԵՐԱՄՇԱԿՎԱԾ ՊԱՐԵՆԱՅԻՆ (ՍՆՆԴԱՅԻՆ) ՀՈՒՄՔԻ ՍՏԱՑՄԱՆ, ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ (ՄՇԱԿՄԱՆ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում են կենդանական ծագման չվերամշակված պարենային (սննդային) հումքի ստացման, վերամշակման (մշակման) գործունեություն իրականացնող արտադրական օբյեկտների (այսուհետ՝ արտադրական օբյեկտներ) պետական գրանցման հետ կապված հարաբերությունները (այսուհետ՝ Կարգ)։

2. Պետական գրանցման ենթակա են այն արտադրական օբյեկտները, որոնցում իրականացվում է կենդանական ծագման չվերամշակված պարենային (սննդային) հումքի ստացման, վերամշակման (մշակման) գործունեություն, մասնավորապես՝ սննդամթերքի արտադրության (պատրաստման) հետևյալ գործընթացները՝

1) մթերատու կենդանիների և թռչունների սպանդ, մթերատու կենդանիների և թռչունների սպանդային մթերքի վերամշակում (մշակում) սննդամթերքի արտադրության (պատրաստման) համար.

2) հում կաթի, հում սերուցքի և յուղազերծված հում կաթի ընդունում և (կամ) դրանց վերամշակում (մշակում) կաթնային արտադրանքի արտադրության (պատրաստման) ժամանակ.

3) գյուղատնտեսական նշանակության թռչունների ձվերի և դրանց վերամշակումից ստացվող մթերքների արտադրություն (պատրաստում) և վերամշակում (մշակում).

4) ակվակուլտուրայի արտադրանքի և ջրային կենսապաշարների որսի (արդյունագործության ոչ ձկնային օբյեկտներ), բացառությամբ բուսական ծագման արտադրանքի, արտադրություն (պատրաստում) և վերամշակում (մշակում)։

3. Սույն կանոնակարգը չի տարածվում հանրային սննդի հետ կապված արտադրական օբյեկտների վրա:

4. Արտադրական օբյեկտների պետական գրանցումն իրականացնում է

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը (այսուհետ՝ Տեսչական մարմին):

5. Արտադրական օբյեկտների պետական գրանցման համար սահմանված ձևով դիմում է ներկայացվում Տեսչական մարմին:

6. Արտադրական օբյեկտի պետական գրանցման մասին դիմումը ստանալու օրվանից 30 օրվա ընթացքում Տեսչական մարմինն իրականացնում է վարչական վարույթ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերով սահմանված՝ արտադրության (պատրաստման) գործընթացին ներկայացվող պահանջներին համապատասխանությունը պարզելու նպատակով:

7. Վարույթն իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

8. Եվրասիական տնտեսական միության անդամ մեկ պետության տարածքից տեղափոխված վերահսկվող ապրանքների արտադրությամբ, վերամշակմամբ և (կամ) պահպանմամբ զբաղվող կազմակերպությունների և (կամ) անհատ ձեռնարկատերերի ռեեստրում ընդգրկված իրավաբանական և (կամ) անհատ ձեռնարկատերերի արտադրական օբյեկտների պետական գրանցումը իրականացվում է ներկայացված դիմումի հիման վրա՝ առանց սույն Կարգի 6-րդ կետով նախատեսված վարույթի:

9. Վարույթի արդյունքների հիման վրա Տեսչական մարմինն որոշում է կայացնում արտադրական օբյեկտի պետական գրանցման մասին՝ նրան նույնականացման (հաշվառման) համար հատկացնելով և ներառելով արտադրական օբյեկտի մասին տեղեկատվություն պետական գրանցման ենթակա պարենային ապրանքների արտադրության արտադրական օբյեկտների ռեեստրում (այսուհետ՝ ռեեստր):

10. Սահմանված պահանջների անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում տրվում է դրանք վերացնելու մասին հանձնարարական՝ հղում կատարելով իրավական ակտով սահմանված պահանջներին և նշելով անհամապատասխանությունների վերացման համար անհրաժեշտ միջոցառումները:

11. Անհամապատասխանությունները վերացնելու համար Տեսչական մարմնի կողմից տրամադրվող ժամկետը համաձայնեցվում է տնտեսավարող սուբյեկտի հետ: Սահմանված ժամկետում անհամապատասխանությունները չվերացնելն իրավական հետևանքներ չի առաջացնում:

12. Հանձնարարականում նշված ժամկետում անհամապատասխանությունները վերացնելուց հետո դիմումատուն 3 օրվա ընթացքում Տեսչական մարմնին գրավոր ծանուցում է հանձնարարականի կատարման և հայտնաբերված անհամապատասխանությունները վերացնելու մասին: Ծանուցման մեջ նշվում են

անհամապատասխանությունների վերացման փաստը և հայտնաբերված անհամապատասխանությունների վերացմանն ուղղված միջոցառումները:

13. Տեսչական մարմինը վարույթի արդյունքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները վերացնելու մասին ծանուցումն ստանալուց հետո 15 օրվա ընթացքում իրականացնում է վարույթ և որոշում է կայացնում արտադրական օբյեկտի պետական գրանցման կամ պետական գրանցումը մերժելու մասին:

14. Արտադրական օբյեկտի պետական գրանցումը կատարվում է անժամկետ:

15. Արտադրական օբյեկտի պետական գրանցումը մերժելու հիմքերն են.

16. Արտադրական օբյեկտի պետական գրանցումը մերժվում է սահմանված պահանջներին արտադրական գործունեության անհամապատասխանությունները կամ հայտնաբերված անհամապատասխանությունները վերացնելու մասին հանձնարարականը չկատարելու դեպքում:

17. Գրանցումը մերժելու մասին որոշումը՝ մերժման հիմքերի նշմամբ, Տեսչական մարմինը աշխատանքային երեք օրվա ընթացքում պատշաճ ձևով ուղարկում է դիմումատուին:

18. Պետական գրանցում ստացած տնտեսավարող սուբյեկտը 14 օրվա ընթացքում, արտադրական օբյեկտների գրանցման մարմին է ներկայացնում տեղեկություններ հետևյալ փոփոխությունների մասին՝

1) իրավաբանական անձի գտնվելու վայրի փոփոխություն.

2) անհատ ձեռնարկատիրոջ ազգանվան, անվան, հայրանվան, գրանցման հասցեի, անձը հաստատող փաստաթղթի տվյալների փոփոխություն.

3) իրավաբանական անձի վերակազմակերպում:

19. Պարենային ապրանքների արտադրության (պատրաստման) ընթացիկ գործընթացների ցանկի վերաբերյալ տեղեկատվության փոփոխության՝ նման գործընթացների քանակի ավելացման դեպքում հայտատուն այդ փոփոխությունների մասին տեղեկացնում է սննդամթերքի արտադրության (պատրաստման) նոր գործընթացների իրականացման նախատեսվող մեկնարկից առնվազն 30 օր առաջ՝ ռեեստրում համապատասխան փոփոխություններ կատարելու համար:

20. Պարենային արտադրանքի արտադրության (պատրաստման) ընթացիկ գործընթացների ցանկի վերաբերյալ տեղեկատվության փոփոխության՝ նման գործընթացների քանակի ավելացման դեպքում Տեսչական մարմինն իրավունք ունի պարզելու արտադրական օբյեկտների համապատասխանությունը օրենսդրական ակտերով, այդ թվում՝ տեխնիկական կարգավորող իրավական ակտերով սահմանված

արտադրության (պատրաստման) գործընթացների պահանջներին։

21. Սույն կարգի համաձայն իրականացվող վարչական վարույթի ընթացքում խախտումներ հայտնաբերելու դեպքում հայտատուն կարող է մերժում ստանալ՝ փոխելու ռեեստրի տվյալները։

22. Արտադրական օբյեկտի փաստացի հասցեի փոփոխության կամ հայտատուի լուծարման դեպքում արտադրական օբյեկտի պետական գրանցումը դադարեցվում է։

23. Արտադրական օբյեկտների պետական գրանցման մասին տեղեկությունները մուտքագրվում են պետական գրանցման ենթակա՝ սննդամթերքի արտադրության արտադրական օբյեկտների ռեեստր, որը վարում է Տեսչական մարմինը։

24. Պետական գրանցման ենթակա՝ սննդամթերքի արտադրության արտադրական օբյեկտների ռեեստրում ներառվում են հետևյալ տեղեկությունները՝

1) արտադրական օբյեկտի նույնականացման (հաշվառման) համարի վերաբերյալ,

2) իրավաբանական անձի անվանման և գտնվելու վայրի վերաբերյալ,

3) անհատ ձեռնարկատիրոջ ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում), ինչպես նաև անձը հաստատող փաստաթղթի տվյալները,

4) արտադրական օբյեկտի փաստացի հասցեի վերաբերյալ,

5) պարենային ապրանքների արտադրության (պատրաստման) ընթացիկ գործընթացների ցանկի վերաբերյալ։

25. Հայտատուի ցանկությամբ նրան կարող է տրվել քաղվածք ռեեստրից։

26. Քաղվածքը պետք է պարունակի տեղեկատվություն.

1) արտադրական օբյեկտի նույնականացման (հաշվառման) համարի վերաբերյալ,

2) իրավաբանական անձի անվանման և գտնվելու վայրի վերաբերյալ,

3) անհատ ձեռնարկատիրոջ ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում), ինչպես նաև անձը հաստատող փաստաթղթի տվյալները,

4) արտադրական օբյեկտի փաստացի հասցեի վերաբերյալ,

5) պարենային ապրանքների արտադրության (պատրաստման) ընթացիկ գործընթացների ցանկի վերաբերյալ։

27. Ռեեստրի տեղեկությունները, ինչպես նաև դրանում կատարված փոփոխություններն ու (կամ) լրացումները տեղադրվում են Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջում։

Հավելված N 2
ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի
ղեկավարի 2022 թվականի օգոստոսի
18-ի թիվ 2561-Լհրամանի

ԴԻՄՈՒՄ

Կենդանական ծագման չվերամշակված պարենային (սննդային) հումքի ստացման, վերամշակման (մշակման) գործունեություն իրականացնող արտադրական օբյեկտների պետական գրանցման վերաբերյալ

Դիմող _____

ազգանունը, անունը, հայրանունը, բնակության վայրը,

_____

անհատ ձեռնարկատիրոջ անձը հաստատող փաստաթղթի մանրամասները,

_____

վճարողի հաշվառման համարը, իրավաբանական անձի անվանումը և գտնվելու վայրը, հեռախոսը)

Խնդրում ենք գրանցել_____արտադրական օբյեկտը,

(արտադրության փաստացի հասցեն)

որտեղ իրականացվում է կենդանական ծագման չմշակված պարենի (սննդամթերքի) հումքի ստացման, վերամշակման (մշակման) գործունեություն:

Պարենային ապրանքների արտադրության (պատրաստման) ընթացիկ գործընթացների ցանկը. _____

Հավաստում եմ, որ սույն դիմումում պարունակվող տեղեկատվությունը իրական է:

_____ _____

(դիմողի կամ նրա ներկայացուցչի ստորագրությունը) (անուն, հայրանուն, ազգանուն)

_____

(ամսաթիվ)